

ԼԱՏԻՆԱԿԱՆ ՆԵՐՎ ՏԵՐՄԻՆԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Անատոմիական ներվ հանրահայտ գոյացությունը տարբեր հեղինակների կողմից և տարբեր ժամանակներում հայերենում արտահայտվել է տարբեր ձևերով: Այսպես, այն թարգմանվել է «նյարդ», «ջիղ», «ջիլ», «երակ», «շնչերակ» և նույնիսկ «աճառ» բառերով: Սակայն վերջինների իմաստը ճշտված ու կոնկրետացված չի եղել և դրանք բացի ներվից զործածվել են նաև շատ ուրիշ նշանակություններով, իսկ ոչ հազվադեպ՝ և որպես հոմանիշներ: Այսպես, օրինակ, նոր հայկազյան բառարանում (ՆՀԲ), որը լույս է տեսել 1836—1837 թվականներին, «նեարդ» բառի դիմաց դրված են հունական և լատինական «*νῆρ*» «*fibra*», «*νεῦρον*», «*nervius*», «*νεῦρον*», «*tendo*», «*αρτερία*», «*arteria*», «*χόνδρον*», «*cartilago*» տերմինները, ապա կարդում ենք. «ջղային թելք և մազմզուկք՝ ի մարմնի և յերակս կենդանույ, ջիղք և աճառք պնդիչք և ձգձգիչք՝ հայերեն բացատրությունը: Այսպիսով, դուրս է դալիս, որ «նյարդը» և՛ ջղային թել է, և՛ ջիղ, և՛ մազմզուկ, և՛ զարկերակ և՛ երակ և նույնիսկ աճառ, մինչդեռ այդ տերմիններն արտահայտում են անատոմիական բոլորովին տարբեր գոյացությունների անուններ: Այնուհետև բերվում է հետևյալ վկայությունը. «Ըստ բնության միսք և ջիլք յարենէ լինին, ջիլն իսկ ի ներդիցն» (εξ ὧν, a fibris et ligamentis) վասն բաղադրանության» (Պղատ. Տիմեի) (ըստ բնության մսերն ու ջիլերը դուրսնում են արյունից, իսկ ջիլը՝ նյարդից (ֆիբրաններից և կապաններից կըցման միջոցով): Բերված վկայությունից պարզ երևում է, որ նյարդ ասելով, հեղինակն այստեղ նկատի ունի ոչ թե ներվ անատոմիական գոյացությունը, այլ ֆիբրոզ թելեր և կապաններ, որոնք, միմյանց հետ միանալով, կազմում են ջիլը (ռուս. сухожилие): Լատինական *fibra*-ի և *tendo*-ի իմաստով է զործածված նյարդ բառը նաև Նեմեսիոս Խմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» գրքի հայերեն թարգմանության մեջ հետևյալ դարձվածքներում. «մկունքն շարակային ի մարմնոյ և ի ջղուտ նեարդից շարամանեցելոց» (մկանները կազմվում են մարմնից և ջլավոր (ֆիբրոզ) թելերից, միմյանց հետ միանալով (զլ. 27, էջ 107): Ապա՝ «Կարթը շարադրութեամբ են ի շս դկապաց և ի ջղուտ նեարդաց (հոգերը բաղադրվում են կապաններից և ջլավոր (ֆիբրոզ) թելերից (զլ. 4, էջ 58): «Ջղուտ նեարդաց» ասելով, հեղինակը նկատի ունի ոչ թե ներվեր, այլ ֆիբրոզ թելեր, որոնցից կազմված են հոգաշապիկը և մկանաջիլերը:

Մխիթար Արքայի 1749 թ. հրատարակած բառարանում «նեարդ» բառի դիմաց կարդում ենք. «ջիղ կամ ջիլ... իսկ մերթ նշանակէ զշնչերակն՝ որ է երակ, յցեալ շնչով կամ կենսական նուրբ ոգովք, և թեպետ ունի ևս զարին, բայց շունչքն և ոգիքն առաւել են, ուստի և այսպիսի երակքս են բուռն և շար-

¹ Շնչերակը հունական *αρτερία* բառի տառացի թարգմանությունն է և նշանակում է ոգով լցված երակ, որ մենք անվանում ենք զարկերակ:

ժուռնալի մշտաբարակ. սորա են և գործիք շնչառութեան և հանելոյ զծայն»։ Այստեղ խոսքն, անշուշտ, վարկերակի մասին է, որը, ինչպես հնում կարծում էին, օդ է պարունակում, ուստի համարում էին շնչառության գործարան։ Հեղինակն այնուհետև շարունակում է. «դարձեալ նեարդք կոչին փոկք, կամ կարծրաման տոռունք, կամ առասանք, և կամ շուանք՝ ըստ որում և իբրև զջիւս»։ Այսպիսով, նյարդն այստեղ գործածվել է և՛ վարկերակի, և՛ ջլի, և՛ շնչառության ու ծայնի գործարանի, և՛ փոկի, և՛ առասանի, և՛ պարանի իմաստով։

«Նյարդը» ֆիրրայի, սակայն ոչ ներվի իմաստով պետք է հասկանալ նաև նրանից կապմված շատ ածանցյալներում և բարդություններում։ Այսպես, «ներդեայ» ածանցյալի դիմաց ՆՀԲ-ը գրում է. «Այն՝ ոչոյ նյութն է նեարդ, կամ ջիդ, որպէս արջառաջիլ, փոկ, յորոյ վերայ պատեալ զբեմութս² վարէին որպես ճուպան, այսինքն շուան՝ պարան կարկամ և անբեկանելի»։ Այդ նույն նշանակությամբ է գործածված «նյարդը» «ներդեայ» ածանցյալում նաև Մովսես Խորենացու մոտ, որտեղ կարդում ենք. «Զոր տեսեալ թագաւորին բասլաց, մօտ հասանէ յարքայն. և հանեալ յասպաղինէն զնեղեայ Բեմխտապատ պաւանն, և կորովութեամբ ձգեալ յետուստ կողմանէ ճարպ (ճահ) դիպեցուցանէ յուս ձախակողմանն և յանութ աջակողմանն»... «Ահեակ ձեռամբն ի ներդեայն աճապարեալ հսկային»։ (Բասիլների թագավորն այս տեսնելով՝ մօտ է գալիս (հայոց) թագավորին, հանում է ձիու վրայից ջլերից հյուսված կաշեպատ պարանը և, հետևի կողմից ուժեղապես նետելով, հաջողությամբ զցում է նրա ձախ ուսից մինչև աջ կողմի անութը... «Հսկան աճապարելով ձախ ձեռքով բռնեց պարանը» (թարգ. Ս. Մալխասյան)։

Ինչպես տեսնում ենք, Ս. Մալխասյանը «ներդեայ Բեմխտապատ պաւան» կապակցությունը թարգմանել է «ջլերից հյուսված կաշեպատ պաւան» դարձվածքով, նույնացնելով այսպիսով «նյարդ» և «ջիլ» բառերի նշանակությունները, որոնք սակայն գործածված են ոչ ներվի իմաստով։

Գրեթե նույնպես է հասկացել Խորենացուն նաև նախկին Հազարյան ճեմարանի պրոֆեսոր Մկրտիչ Էմինը, որը վերոհիշյալ պարբերությունը թարգմանել է ռուսերեն այսպես. «Царь басилов, при виде этого, приближается к государю и, вынув из-под конской сбруи аркан, обвитый ремнем, обтянутый кожей, мощною рукою бросив с тылу, ловко попадает на левое плечо и в правую подмышку царя»։

Այսպիսով, Խորենացու «ներդեայ Բեմխտապատ պաւան» կապակցությունը Մ. Էմինը թարգմանել է «аркан, обвитый ремнём и обтянутый кожей» դարձվածքով, որտեղ «ներդը» նույնացված է ռուսական ремень բառի հետ, որը ոչ մի առնչություն չունի ներվի հետ մեր այժմյան հասկացողությամբ։

Հնագույն հայ գրական աղբյուրը, որտեղ հանդիպում են նյարդ, ինչպես և անառ բառերը, դա Աստվածաշունչն է, որի մեջ «Մարգարեությունն Եզեկիելի» դիտում կարդում ենք. «Վասն այսորիկ այսպէս ասէ Տեր Տեր. «Ահաւասիկ ես ՚ի վերայ փարաւոնի արքային Եզիպտացոց, և խորտակեցից զբազուկս նորա հզօրս զնեարդապատս և զաճառապատս, և ընկեցից զսուրն ՚ի ձեռանէ նորա» (Ուստի և այսպես է ասում տե՛ր աստվածը... Ահավասիկ ես եզիպտացիների արքայի՝ փարավոնի վրա եմ, և կխորտակեմ նրա հզոր նյարդապատ և աճառապատ բաղուկները և վայր կզցեմ նրա ձեռքից սուրը (Եզեկ. XXX, 22)։ Այս

¹ Քեմսուխտը էջի կամ ջորու մշակված կաշին է։

տեղ «նեարդապատ և աճառապատ» ասելով, պետք է հասկանալ, անշուշտ, մկաններով, ջլերով, փակեղներով կամ երակներով պատած, որովհետև դրանցով, սակայն ո՛չ ներվերով և ո՛չ էլ աճառներով են պատած բազուկները:

Իմ այդ ենթադրությունը ճշտելու համար ես դիմեցի հունական բնագրին, որից 5-րդ դարում կատարված է «Մարգարեություն Եզեկիելի» ղլխի հայերեն թարգմանությունը: Հունական բնագրի նշված տեղում ասված է.

«Διὰ τούτου ταῦτε λέγει Κύριος Κύριος.. Ἰσού ἐγώ ἐπὶ Φαραὼ βασιλεῖα Αἰγύπτου, καὶ συντρίψω τοὺς βραχίονας αὐτοῦ τοὺς ἰσχυροὺς, καὶ τοὺς τεταμένους, καὶ καταβάλω τὴν μαχαίραν αὐτοῦ ἐκ τῆς χειρὸς αὐτοῦ.

Վերլուծենք այս պարբերությունը բառ առ բառ. «Ուստի և այսպես է ասում տեր աստվածը. «Ահավասիկ ես եզիպտացիների թագավորի՝ փարավոնի վրա եմ և կփշրեմ (սυντρίψω) նրա հզոր (ισχυροὺς) և տարածուն (τεταμένους) բազուկները և վայր կզցեմ նրա ձեռքից սուրը»:

Եզեկիելի նշված պարբերությունը լատիններեն թարգմանված է այսպես. «Propterea haec dicit Dominus, Dominus. Ecce ego super Pharaonem regem Egypti, et conteram brachia ejus fortia et extenta, et dejiciam gladium de manu ejus».

Սրա հայերեն տառացի թարգմանությունը կլինի. «Ուստի և այսպես է ասում տեր տերը. «Ահավասիկ ես եզիպտացիների թագավորի՝ փարավոնի վրա եմ և կփշրեմ (conteram) նրա բազուկները հզոր (fortia) և տարածուն (extenta) և վայր կզցեմ նրա ձեռքից սուրը»:

Ինչպես տեսնում ենք, լատինական վարիանտը հունականի տառացի թարգմանությունն է, որտեղ հունական βραχίονας ἰσχυροὺς կապակցությունը թարգմանված է լատինական brachia fortia դարձվածքով, որ նշանակում է հզոր բազուկներ, իսկ τεταμένους-ը լատինական extenta-ով, որ նշանակում է տարածուն, տարածված:

Այսպիսով, թե՛ հունական և թե՛ լատինական տեքստում չկան ո՛չ «նյարդապատ», ոչ էլ «աճառապատ» բառերը, որոնք, մեր կարծիքով, որպես որոշիչներ տրված են բազուկներ բառի կողքին նրանց հզորությունն ավելի ևս շեշտած լինելու համար: Նյարդապատ հունարեն պետք է թարգմանել νεύρωσις իսկ լատիններեն՝ nervosus բառերով. աճառապատ հունարեն կլինի χονδρώδης իսկ լատիններեն՝ cartilagenosus, հետևաբար Եզեկիելի «և խորտակեցից զբազուկս նորա հզորս զնեարդապատս և զաճառապատս» դարձվածքը հունարեն պետք է թարգմանել և՛ συντρίψω τοὺς βραχίονας αὐτοῦ τοὺς ἰσχυροὺς, καὶ τοὺς νεύρωδης, καὶ τοὺς χονδρώδης: Նույն խարբերության հայերենից-լատիններեն թարգմանությունը կլինի՝ «et conteram brachia ejus fortia, et nervosa, et cartilagenosa, սակայն ոչ extenta կամ τεταμένους», ինչպես որ հանդիպում են լատիններեն և հունարեն բնագրերում:

«Նեարդատեսակ» բարդության մեջ «նյարդ» բառը, ըստ ՆՀԲ-ի պետք է հասկանալ աճառի իմաստով: ՆՀԲ-ը «նեարդատեսակ» բառի դիմաց գրում է. «աճառատեսակ, աճառուտ, նման ներդի», համարելով այն հունական χονδρώδης կամ լատինական cartilagenosus բառի հայերեն փոփոխակը, որը նշանակում է աճառուտ:

Աճառի իմաստով է գործածված նյարդ բառը նյարդատեսակ բարդության

մեջ նաև նեմեսիոս նմեսացու մոտ: Այսպես, նրա «Յաղագս բնութեան մարդոյ» գրքի հայերեն թարգմանության մեջ, որ կատարել է ութերորդ դարում Ստեփան Սյունեցին, կարդում ենք. — «Քանզի 'ի խոշոր շնչերակացն՝ նեարդատեսակքն են ձայնին դործարանք, իսկ մզնատեսակքն նորա՝ կապք տուրևառի շնչոյն»:

Դրան հակառակ, նեմեսիոսի մոտ հանդիպում են պարբերություններ, որտեղ «նեարդ» տերմինը գործածված է ներվի իմաստով: Այսպես, օրինակ, նույն աշխատության մեջ կարդում ենք. «Եւ է նեարդալարն (ὁ τενων) կազմեալ 'ի շաղկապմանց և 'ի բազմաշար նեարդից: Եւ որոշի նեարդալարն 'ի նեարդէ այնու՝ զի ամենայն նեարդ զգայուն է, զլանաձև, կակղանիւթ, և ունի զսկիղբն իւր յուղեղէն, իսկ նեարդալարն առաւել պինդ, ոսկրային բնութեամբ, անզգայ ըստ ինքեան և երբեմն լայն» (Հաղ. բն. մարդո, զլ. 27, էջ 107) (Եւ նյարդալարը կազմված է բազմաշար նյարդերի շաղկապումից: Եվ նյարդալարը տարբերվում է նյարդից նրանով, որ ամեն մի նյարդ զգայուն է, զլանաձև, կակղանյութ և սկիղբ է առնում ուղեղից: Իսկ նյարդալարն ավելի պինդ է, բնությամբ ոսկրային, ինքնին անզգա, երբեմն էլ լայն):

Այստեղ «նեարդ» ասելով, մատենագիրն, անշուշտ, նկատի ունի ներվը, որը «զգայուն» է և սկիղբ է առնում ուղեղից: Սակայն, չնայած դրան, այդ նույն «նյարդից» կազմվող «նեարդալար» բառի կողքին դրված է հունական ὁ τενων բառը, որը նշանակում է ջիլ, լատիներեն tendo, ռուսերեն сухожилие, որը բոլորովին տարբեր հյուսվածք է և կաղմաբանորեն ոչ մի առնչություն չունի ներվի հետ:

Ջիլ կամ ջիլ բառը, որով այժմ ոմանք առաջարկում են արտահայտել անատոմիական ներվ գոյացությունը, անցյալում նույնպես գործածվել է մի քանի նշանակությամբ՝ և՛ ներվի, և՛ նյարդի (ֆիբրայի), և՛ ջլի (լատ. tendo, ռուս. сухожилие), և՛ փոկի իմաստով: ՆշԲ-ը «ջիլ» բառի դիմաց գրում է. «Նեարդ պնդագոյն իբր լար անխզելի 'ի մարմնի կենդանեաց, զօդ յօդից (հոդերի կապան), գործի ուժոյ՝ շարժութեան, քաջ զգայութեան»: Ինչպես տեսնում ենք, այս բացատրության առաջին մասում «ջիլն» տրվում է լատինական tendo-ի, ռուսական сухожилие-ի նշանակություն, ապա հողակապանի («օդ յօդից») իմաստ: Սակայն երկրորդ մասում, որտեղ ասվում է «գործի ուժոյ՝ շարժութեան, քաջ զգայութեան», «ջիլն» արդեն պետք է հասկանալ ներվի իմաստով:

Առաջին նշանակությամբ, այսինքն լատիներեն tendo-ի, կամ ռուսերեն сухожилие-ի իմաստով ջիլը գործածված գտնում ենք նաև մի շարք այլ մատենագիրների մոտ: Այսպես, օրինակ, Գրիգորիս Արշարունյացի «Մեկնութիւն ընթերցութեան» գրքում կարդում ենք. «Քաղալորն փառաց հետամուտ եղեալ եհատ զջիղս աւազակին, և ձեռքակալ առնելով կապեալ ած 'ի դատաստան մահու»: (Քաղալորը փառքի հետամուտ լինելով, կտրել տվեց ավազակի ջիլերը և ձեռքակալելով նրան կապեց ու մահվան դատաստանի հանձնեց): Այստեղ խոսքն, անշուշտ, աքիլիսյան ջլերի մասին է, որոնց հատումը լայնորեն կիրառվում էր հնում ավազակների և անհնազանդ ստրուկների նկատմամբ նրանց փախուստը կանխելու նպատակով:

Խորենացին ջիլը, ինչպես և նյարդը գործածել է փոկի, երիզի իմաստով: Այսպես, օրինակ, նրա պատմության 3-րդ գրքում կարդում ենք. «Քանզի զօրքն Յունաց վառեալ էին 'ի զէնս ոսկուց և արծաթոց, և երիւարք նոցա նոյնպէս

զարդու և էր տեսանել իբրև զպարիսպ ինչ յուրվք՝ ի ջղեայ և ի կաշեայ պահպանակաց զգեստուն զկարծրութեան վիմաց բերէին երևոյթն, և ի վերայ նոցա անխալամ գէսի նշանք արծակեալք իբր զսաղարթ ինչ հովանաւոր ծառոց» (III, 15) (Որովհետեւ հունաց զորքերն սպառապինված էին ոսկեղէն և արծաթեղէն զենքերով և նրանց ձիերն էլ նույնպիսի զարդեր էին կրում, ուստի նրանք կարծես մի պարիսպ էին կազմում, որոնցից շատերը իրենց զգեստների ջղյա և կաշյա պահպանակների պատճառով կարծր բարերի տեսք էին ստանում, և նրանց վրա անխալամ գեսերը, իբրև նշաններ, ծածանվում էին սաղարթախիտ ծառերի սաղարթների նման (թարգ. Ս. Մալխասյան):

Այս պարբերությունը Մկրտիչ էմիրը թարգմանել է առանձին աշույկես.
„Греческое войско носило золотые и серебряные доспехи, такое же
убранство было на конях. Казалось, видишь (перед собою) стену;
многие (из воинов) были в броне из ремней и кожи и представляли
собою вид крепких скал; на голове у них развевались гривы, как
листья тенистых деревьев (книга III, гл. 37).

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Մկրտիչ էմինը հորենացու ջղա և կաշ-
յա պահպանակ կապակցությունը թարգմանել է броня из ремней и кожи
դարձվածքով, որտեղ ջղա բառը արտահայտվել է ремень-ով և ոչ մի առնչու-
թյուն չունի ներքի հետ:

Նեմեսարիոս Խմենացու «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատության հայերէն թարգմանության մեջ նույնպէս հանդիպում են «չիղ» տերմինից կազմված բարդություններ, որոնք գործածված են ֆիբրոզ հյուսվածքի իմաստով: Այսպէս. «Ընդ ոսկր կրծքիցն և ընդ սիրտն՝ ի միջի ջղուտ տեղի, զոր մեք սրտակրանք³ ասեմք: Իսկ առագաստ⁴ ասէ զմզղնաձև մորթն՝ որ պատեալ է զսիրտն, և ՚ի վերա ունի քան զորովայնն» (Լուծումն, գլ. 21, էջ 100) (Կրծոսկրի և սրտի տակ կա ջղուտ տեղ, որը մենք անվանում ենք առագաստ, իսկ սրտակրանք կոչում ենք մզղնաձև մորթը, որը պատում է սիրտը և որովայնից վեր պահում): Այնուհետև՝ «Զխելսն շուրջ ունի ջղուտ միզնն՝ (ուղեղը շրջապատված է ջղուտ (ֆիբրոզ) պատշանով): Այս դարձվածքներում «ջղուտ» բառն, անկասկած, նշանակում է ֆիբրոզ հյուսվածք, որից կազմված են սրտակրանքը (սրտապարկը), առագաստը (ստոծանին) և ուղեղապատշանը: Դավիթ Անհաղթի «Ոսկերք մարմնոյն պատկանեալ ջղակապ յօղիք» (մարմնի ոսկորները կցվում են ջղակապ հողերով) դարձվածքում «ջղակապ» բառը նույնպէս գործածված է ֆիբրոզ կապանի իմաստով:

Զիշը ֆիբրայի, սակայն ոչ ներվի իմաստով գործածված գտնում ենք նաև Վարդան Բաժճարեկցու «գիսեապատակն և զշղուտ պարուտակսն», «մկունք ջղուտք ՚ի մարմնի» դարձվածքներում:

Գերիզուր Նյուսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» գրքում «շիղ» տերմինը գործածվել է նաև ամառի իմաստով, ինչպես դա երևում է հետևյալ դարձվածքից. «Բրուրակագոյնք են զկոկորդին մասունքն և յոլովէ ի սոսա ջրդուտն» (կլոր են կոկորդի մասերը և շատ է սրանց մեջ ջղուտը): «Ջղուտ» ասելով, այստեղ պետք է հասկանալ միայն աճառ կամ աճառային հյուսվածք, որից հիմնականում և կազմված է կոկորդի կմախքը:

Գրիգոր Տաթևացին ջիւն վերադարձաւ է մի քանի նշանակութիւն: Նրա

³ Ուղղելի է առաջատու: ⁴ Ուղղելի է սրտակրանք:

«Գիրք հարցմանց» աշխատության մեջ կարդում ենք. «Ասեն բժիշկք, թէ ԲՃՆԸ ոսկր է մարդոյն, ջլօք պնտեալ և կապեալ ի մի մարմին»... ապա «նախ խելապատակն սկիզբ է ջլացն, որ միայնաբար Ը ուլունս պարանոցին անցանէ և բաժանի թիկունս, ի ձեռս և յայլ մարմինս: Որպէս բունն մի է ծառոյն և ի բազում ճիւղս բաժանի: Եւ նոյն ջիւն կապէ և շարապնդէ զամենայն յօդուածս ոսկերացն. և նա տա խաղալ և շարժիլ ոտից և ձեռաց և այլ մասանց անդամոցն: Եւ նա է զգացական, և յոր մասն և խառնի՝ առնէ զգացումն: Եւ նա է հնազանդ բանին: Զայս Դ յատկութիւնս ունի ջիւն» (էջ 243, 244) (բժիշկներն աւսում են, թե մարդը 243 ոսկոր ունի, որոնք ջլերով ամուր կապված են միմյանց հետ, կազմելով մի մարմին... ապա նախ, ուղիղապատյանը ջլերի սկիզբերն է, որոնք անցնում են պարանոցի 8 ողնիքով և բաժանվում թիկունքի, ձեռքերի և այլ մարմնամասերի վրա, ինչպես որ ծառի բունը մեկ է և բազմաթիվ ճյուղերի է բաժանվում: Նույն ջիւր և կապում ու խառնապնդում է ոսկորների բոլոր հոդերը, նա և տալիս է խաղ ու շարժումներ ոտքերին, ձեռքերին և անդամներին այլ մասերին: Նա և զգայուն է, որ մասին որ միջամտում է, զգացում է առաջացնում, նա և ենթարկվում է բանականությանը): Այսպիսով, ինչպես տեսնում ենք բերված վկայությունից, Գ. Տաթևացին «ջիւր» գործածում է և՛ ֆիզիկական, և՛ կապանի, և՛ ջլի (ռուս. сухожилие), և՛ վերջապես, ներվի իմաստով:

13-րդ դարի մատենագիր Երիզուրի ջիւր, բացի ներվից, գործածել է նաև մկանի իմաստով: Այսպես, նրա «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» գրքում կարդում ենք. «Զի ասեն իմաստունքն, թէ ամէն աչք ունի բարակ ջիւ մի և ինն տափակ ջիւ, վեցն ի նոցանց շարժեն զաչսն և երեքն ժողովեն զբարակ ջլացն դտակսն, զի բարակ ջլացն տակքն կայարանք է այն հոգւոյն. որ զլուսն տայ» (էջ 89): Այնուհետև շարունակում է. «Եւ երկու ջիւսն, որ զաչն ի շուռ ածեն յաչ և ձախն» (էջ 89): Այստեղ, խոսքն անշուշտ ակնագնդի մկանների մասին է, որոնցից շուրսը շարժում են ակնագունդը ուղղահայաց և միջաձիգ առանցքների շուրջը, իսկ վերջին գույգը թիւք մկաններն են, որոնք պտտում են աչքը նրա նետաձիգ առանցքի շուրջը: Սակայն նույն մատենագիրը՝ «ջիւր» կիրառում է և ներվի իմաստով, ինչպես դա ցույց է տալիս հետևյալ վկայությունը... «Եւ թէ աչիցն լուսն խափնեալ է, դուն գիտացիր, որ լուսոյն օխսն թուլցեալ են» (էջ 90): «Լուսոյն ջիւս» ասելով, մատենագիրը նկատի ունի անշուշտ տեսողական ներվը: Այնուհետև կարդում ենք. «Եթէ պատճառն ի յառաջ ւան զայս ցաւերս, զոր ասացաք, դեպք է՝ որ ընդ զլուսն է դիպել և կամ զարկբք, նայ ցուցանէ, որ լսելեաց ջիւսն ջախեալ է» (էջ 94): Այստեղ խոսքն արդեն լսողական ներվի մասին է:

Եվ, վերջապես, «ջիւղ» բառը մեր մատենագիրների կողմից գործածվել է նաև ներվի իմաստով: Այսպես Նեմեսիոս Նմեսապո «Յաղագս բնութեան մարդոյ» գրքում կարդում ենք. «Եւ առաքին զպայականքն և կակղագոյնքն ջիւղքն ի միջոյն և զառաջնով կուսէ խելացն փորուածոյ, իսկ խստագոյնքն՝ յետուստ կուսէ փորուածին, և յողին ուղղոյ, և խստագոյնք են յաւէտ՝ որք յողանէն, և ի սոցանէ ևս յաւէտ՝ որք ի ներքուստ կուսէ ողինն. քանզի որքան առաւել դատանի ի խելացն ողնն, այնքան առաւել խստագոյն լինին և ջիւղքն ի նմանէ բու-

5. Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց, աշխատասիրությամբ Ա. Ս. Կոռյանի, Երևան, 1962:

սեալք: Եւ որպէս զգայարանս կրկին աւաք, այսպէս և զիս ջլացն կրկին ունիմք. քանզի իւրաքանչիւր յօդ ողինն՝ զզոյգս ջղացն առարէ յիւրմէ, մի յաջկոյս մարմնոյն և մի յահեակ»: (Եւ առաքւում են զգայական և կակղագոյն ջղերը ուղեղի միջին և առջևի փորոքից, իսկ պնդագոյնները և շարժողականները՝ հետին փորոքից և ողնուղեղից, և ավելի պինդ են ողնից ծագողները, իսկ սրանց մեջ առավել պինդ են ողնի ներսի կողմից ծագողները: Քանի որ որքան շատ է ողնը հետանում ուղեղից, այնքան ավելի պինդ են լինում նրանից ծագող ջղերը: Եւ ինչպես զգայարանները զույգ են, այնպես էլ զույգ են ջղերի ծագման տեղերը. քանի որ յուրաքանչյուր ողնահոդ իրենից արձակում է երկու ջիղ՝ մեկը դեպի մարմնի աջ կողմը, մյուսը ձախ (Յաղագս բնութեան մարդոյ, գլուխ 27, էջ 108): Այստեղ «ջիղն» անշուշտ կիրառւած է ներվի իմաստով:

Անառ բառի նշանակութիւնն այժմ կոնկրետացւել է և թյուրիմացութիւններ չի հարուցում: Ներկայումս այն գործածւում է միայն կոճիկ, լատիներեն *capitago*, ռուսերեն *хрящ*-ի իմաստով: Սակայն ոչ հեռավոր անցյալում այս բառը ևս կիրառւել է բազմաթիւ նշանակութիւններով: ՆշՔ-ը «աճառ» բառի դիմաց գրում է. «*νεῦρον, և, nervus, fibra, նեարդ, ջիղ, ձգանք*» և վերջում միայն «կոճիկ», «կոճուկ»: Ապա բերում է հետևյալ վկայութիւնը. «Ձգմամբք և խզմամբք աճառոց դաժանս երկունս առնէ ծնողացն: Ատամանցն կափկափումն, աճառացն պրկմամբ» (Բրս սղ. և 'ի ճ'ԺԴ և 'ի *սլԿ*) (Աճառների ձգումը և խզումը դաժան երկունք է պատճառում ծնողներին: Ատամների կրճատումը, աճառների պրկումով): Այստեղ «աճառ» բառի տակ մատենագիրն անշուշտ նկատի ունի ոչ թե կոճիկ կամ ռուսերեն *хряц*, այլ ջիղ, ջիլ (ռուսերեն *с сухо-жиле*), ներվ, կապան անատոմիական գոյացութիւնները, որոնք կարելի է ձգել կամ պրկել:

Արեքսանդր Խուդաբաշյանը 1838 թ. Մոսկվայում հրատարակած իր Հայ-ռուսերեն երկհատոր բառարանում «Նեարդ» բառի դիմաց գրել է «*сухая жила*», «*жила биющаяся*» կապակցութիւնը. «Ներդարանութիւն» բարդութիւն դիմաց՝ «*артериология, наука о биющихся жилах*» «Ներդահատութիւն» բառի՝ «*артериотомия, отворение биющейся жилы*» բացատրութիւնը: Նույն բառարանի «Ներդապատ» բարդութիւն դիմաց կարդում ենք «*жиловатый*», «*жилистый*» բառերը: Այսպիսով, «նեարդ» բառին հեղինակը վերադրում է երկու իմաստ՝ 1. «*сухая жила*», որ մենք ասում ենք մկանաջիլ և 2. «*жила биющаяся, кровная*», որ ռուսերեն այժմ անվանում են артерия և մենք թարգմանում ենք զարկերակ բառով:

Նույն բառարանի «ջիլ» կամ «ջիղ» բառերի դիմաց կարդում ենք «*нерв*», սակայն միևնույն արմատից կազմւած «ջլեա», «ջլուտ» ածանցյալների դիմաց գրւած են ոչ թե *нервный, нервичный* կամ *нервический* բառերը, ինչպես որ պետք էր սպասել, այլ *составленный из жил* կապակցութիւնը, ապա «*жильный*», «*жиловатый*», «*крепкий*», «*сильный*» բառերը, որտեղ жила արմատը գործածւած է արդեն ոչ թե ներվի, այլ մկանաջլի իմաստով, ինչպես «Նեարդի» երկրորդ նշանակութիւն դեպքում, քանի որ «*крепкий*», «*сильный*» ածականները բնորոշ են մկաններին և մկանաջլերին, որոնք լավ ուրվագծւում են մաշկի տակից և պայմանավորում մարմնի ամրութիւնն ու ուժը: Ինչպես տեսնում ենք, «ջիլ» կամ «ջիղ» բառերը Ա. Խուդաբաշյանը նույնպէս գործածում է երկու իմաստով՝ 1. ներվի և 2. մկանաջլի (լատ. *tenuo*-ր)

«Երակ» բառի դիմաց նույն բառարանում դրված է՝ առաջին տեղում «жила кровная», որին ուսանելն այժմ անվանում են вена, ապա՝ «фибра» և վերջապես, «ВОЛОКНО» բառերը, «Երակաձև» բարդությունն է՝ «жилообразный», «жилоподобный» բառերը, Ուրեմն, ըստ հեղինակի, «Երակը» նշանակում է ուսանելն և՛ вена, և՛ фибра, և՛ ВОЛОКНО, որոնք միմյանցից բոլորովին տարբեր անատոմիական գոյացություններ են։ Ուշագրավ է, որ և՛ «Երակ», և՛ «Ջիլ» կամ «Ջիդ» և «Երակ» արմատները ու դրանցից կազմված բարդություններն ու ածանցյալները հեղինակը հիմնականում թարգմանում է «жила» բառով ու նրա ածանցյալներով։ Եա ցույց է տալիս, որ Ա. Խուդաբաշյանը այդ բառերի նշանակությունների մեջ առանձին տարբերություններ չի դնում, համարելով դրանք գրեթե նույնիմաստ բառեր։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք շարադրածից, անցյալում նյարդ, ջիդ, ջիլ, երակ և նույնիսկ աճառ բառերի գործածության մեջ տիրել է կատարյալ քաոս։ Այդ բառերը չեն ունեցել կոնկրետ նշանակություն, հաճախ շփոթվել են միմյանց հետ և կիրառվել որպես հոմանիշներ։ Այս անորոշությունը մեզ անցել է հույն և հռոմայեցի հեղինակներից, որոնց մոտ նույնպես այն գոյություն է ունեցել։ Այսպես, օրինակ, բժշկության նախահայր Հիպոկրատի (460—377 մթա) մոտ νεῦρον, լատիներեն nervus բառը, բացի ներվից, նշանակել է սպիտակ գույն ունեցող ամեն մի թելավոր հյուսվածք, ինչպես, օրինակ, նյարդ (fibra), ջիլ, մկանաջիլ, կապան, փակեղ, որտեղից և ծագել է aponeurosis տերմինը, որը ոչ մի կապ չունի ներվի հետ, և մենք այն թարգմանում ենք «ջլոն» բառով։ Ըստ Պլատոնի, νεῦρον նշանակել է ջիլ, մկանաջիլ, թել։ Հեսիոդոսն այս բառի տակ հասկանում էր ջլերից կազմված փոկ, ժապավեն, իսկ Պոլիբիոսը՝ լար, աղեղալար և այլն։ Նույնպիսի անորոշ նշանակություններով են գործածել լատիներեն nervus բառը հռոմայեցի հեղինակները՝ Լիվերոնը, Օվիդիոսը, Տերենտիոսը, Վիրգիլիոսը և ուրիշներ, որոնք այդ բառով, բացի ներվից, անվանել են նաև ջիլ, նյարդ (fibra), լար, թել, փոկ, պարան, երիզ, աղեղալար, մարմնամաս և նույնիսկ penis։ Սակայն հույն և հռոմայեցի հեղինակների մոտ νεῦρον և nervus բառերի նշանակությունը շատ վաղ սկսած Ցելսուսից (մեր թվարկության առաջին դար) ճշտվել ու կոնկրետացվել է, և նրանով նշանակվել է միայն ներվ անատոմիական գոյացությունը այժմյան իմաստով։ Իսկ մեզ մոտ վերևում նշված տերմինների նշանակության մեջ առաջացած քաոսային վիճակը, ցավոք սրտի, շարունակվել է դարեր և շարունակվում է դեռ մինչև օրս։

Մանվել Քաջունին փորձեց վերջ տալ նշված խառնաշփոթությանը։ Այդ առթիվ նա դեռևս 1891 թ. գրել է. «Նախնիք մեր գյունական բառն γόνοςը թարգմանել են նեարդ, զոր հաճախ դնեն յատկապես փոխանակ յոյն բառին և, լատ. fibra. և դաճառն եղեալ են փոխանակ յոյն νεῦρον, լատ. nervus բառին, զոր այլուր յատկապէս կոչեն ջիլ կամ ջիդ. և զջիդն ևս դնեն երբեմն փոխանակ յոյն և, լատ. fibra բառին։ Մեր կամելով որոշել ղերիս այլև այլ նիւթս ի միմեանց և մի շփոթել ընդ իրեարս որպես ղնախնիս մեր, որք բազում անգամ յուսումնական բառսն վրիպին յուղղութենէ և ի ճշտութենէ, կոչեմք զյոյն բառն γόνοςը, լատ. cartilago աճառ, զյոյն բառն և, լատ. fibra կոչեմք նեարդ, զյոյն բառն νεῦρον, լատ. nervus կոչեմք ջիլ կամ ջիդ և զյոյն բառն τενον լատ. tendo՝ կարչն, լար»։ Այս կերպ է աշխատում լուծել Մանվել Քաջունին նշված տերմին-

ների շուրջն ստեղծված հարցը, որը դարեր շարունակ ծառացել է մեր բժշկական տերմինաբանության առաջ և շատ թյուրիմացությունների առիթ ծառայել: Սակայն Քաջունու առաջարկության հիմնական թերությունն այն է, որ անատոմիայի մեջ մտցվում է մեղ համար անհասկանալի մի նոր տերմին՝ կաբլն, լատինական tendo-ի, կամ ռուս. сухожилие-ի համար: Կարշն բառը, բացի խորթ և անհասկանալի լինելուց, իր նշանակությամբ ամենին չի համապատասխանում լատինական tendo-ին, որը մենք թարգմանում ենք ջիլ բառով: Ըստ Հ. Անանյանի, կաբլն նշանակում է ուժ, ղորություն և լատինական գործածված չէ, այլ կիրառված է միայն բարդությունների մեջ: Այդ բառն առանձին բերում է միայն Ստեփանոս Լեհացին՝ 17 դարում կաղմած իր բառարանում, որտեղ նրա դիմաց գրում է. «Մայր բազկի ի մեջ ոսկերաց թիկան և արմկան»: Այդ բացատրության համաձայն կարշնը ոչ մի առնչություն չունի լատինական tendo-ի կամ ռուսական сухожилие-ի հետ:

Ն. Տաղավադյանը 1886 թ. հրատարակած իր «Բնական պատմություն» ձեռնարկում ներվի համար կիրառել է «ջիլ» բառը, ֆիբրայի համար՝ «նեւաղ» և tendo-ի համար՝ «լար»: Սակայն «լար» բառը լայնորեն կիրառվում է լատ. chorda և funiculus տերմիններն արտահայտելու համար: Այսպես, օրինակ, chorda dorsalis կապակցությունը մենք այժմ թարգմանում ենք թիկնալար բառով, chorda vocalis-ը՝ ձայնալար, իսկ funiculus spermaticus և funiculus umbilicalis կապակցությունները՝ համապատասխանաբար սեւմնալար և պորտալար բառերով: Վերահիշյալ թերությունների հետևանքով Մ. Քաջունու և Ն. Տաղավադյանի առաջարկությունները ընդունելություն չգտան մեր բժշկական հասարակայնության կողմից և մերժվեցին: Սակայն, շնայած դրան, թե՛ Մ. Քաջունու և թե՛ Ն. Տաղավադյանի նշված առաջարկությունները անշուշտ կարելի էր ներդրում էին մեր բժշկական լեզվաշինության և, մասնավորապես, անատոմիական տերմինաբանության բնագավառում, քանի որ դրանցով այդ հեղինակները առաջին անգամ փորձեցին վերջ դնել բառսային այն վիճակին, որ դարեր շարունակ տիրում էր նյւաղ, ջիլ, ջիլ, ներվ, ֆիբրա, երակ և աճառ անատոմիական տերմինների գործածության մեջ և աշխատեցին դրանց նշանակությունները ճշտել ու կոնկրետացնել:

Դվիդոն Լուսինյանը 1900—1903 թթ. հրատարակած իր բառարանում ամբողջությամբ կրկնել է նշված տերմինների վերաբերյալ Ն. Տաղավադյանի առաջարկած վարիանտը: Բայց *nerf optique* կապակցության դիմաց նա գրել է «լուսեւակ» բառը, հիմնվելով հին հեղինակների այն վկայությունների վրա, որ երակը անցյալներում նշանակել է նաև ներվ: Հեղինակը գրանով մի նոր խառնաշփոթություն մտցրեց մեր անատոմիական տերմինաբանության մեջ:

Հ. Դադրաշյանը, ամենևին հաշվի չառնելով Ն. Տաղավադյանի և Մ. Քաջունու առաջարկությունները, 1906 թ. հրատարակած իր «Լիակատար ռուս-հայերեն բառարան»-ում նորից կրկնել է հնադարյա խառնաշփոթությունը, գրելով «нерв» բառի դիմաց «նեւաղ, ջիլ, ներվ», «жила և жилка» բառերի դիմաց՝ «ջիլ, ջիլ, նեւաղ», «сухожилие»-ի դիմաց՝ «ջիլ», «дуган» և «фибра»-ի դիմաց՝ «թել», «մկանաթել», «նեւաղ, ջիլ»: Այսպիսով, ըստ Դադրաշյանի, դուրս է գալիս, որ *нерв*, *фибра*, *сухожилие*, *жила* և *жилка* բառերը հոմանիշներ են, որովհետև դրանց բոլորի դիմաց գրված են «նեւաղ», «ջիլ», «ջիլ»: Մինչդեռ նշված բառերը տարբեր նշանակություններ ունեն և արտահայտում

են միմյանցից բոլորովին տարբեր անատոմիական գոյացությունների անուններ:

Շատ ցավում ենք, որ Հ. Դավթաշյանի այս կոպիտ սխալը գրեթե նույնությամբ կրկնել է մեր ակադեմիայի լեզվի ինստիտուտի 1954—1958 թթ. հրատարակած «ռուս-հայերեն» բառարանը, որտեղ «нерв» բառի դիմաց կարդում ենք «նյարդ, ջիդ, ջիլ», «жила»-ի դիմաց՝ «ջիզ», «сухожилие»-ի դիմաց՝ «ջիլ, ձգան» և «фибра»-ի դիմաց՝ «նյարդ, ջիլ, բել»:

Վահան Արծրունին նշված տերմինների շուրջը ստեղծված քառսին վերջ տալու համար 1921 թ. առաջարկեց լատինական «nervus» կամ ռուս. нерв բառը չթարգմանել և նույնությամբ պահպանել հայերենում, լատինական «tendo»-ն կամ ռուսական «сухожилие»-ն արտահայտել հայերեն «ջիլ» բառով, իսկ լատ. «fibra»-ն՝ «նյարդով»: Իկյ առաջարկը նա այնուհետև կենսագործեց իր ղեկավարած անատոմիայի մաթիւնում և հրատարակած ձեռնարկներում ու դասագրքերում, որոնցով այնուհետև սովորեցին բժշկների և միջին բուժաշխատողների տասնյակ սերունդներ:

Վահան Արծրունու առաջարկած վարիանտն ավելի ուշ կիրառեցին Ս. Ս. Բեդյանը, Լ. Հովհաննիսյանը և Ա. Տեր-Պողոսյանը 1951 թ. իրենց կազմած «Հատին-ռուս-հայերեն բժշկական բառարանում», որտեղ լատ. «nervus» բառի դիմաց գրվել է հայերեն «ներվ», «tendo»-ի դիմաց՝ «ջիլ», և «fibra»-ի դիմաց՝ «ներդ»:

Վահան Արծրունու առաջարկությանը հետևել ենք և մենք Հակոբ Հակոբյանի հետ համատեղ կազմած «Անատոմիական միջազգային նոմենկլատուրա» մեր աշխատությունում, հաշվի առնելով, որ նշված տերմիններն ավելի քան քառասուն հինգ տարի կիրառվում են մեր բժշկական և այլ ինստիտուտներում ու դպրոցներում և նրանցով այդ ժամանակաընթացքում հրատարակված կա բժշկական մասնագիտական և հանրամատչելի հսկայական գրականություն:

Սակայն Վահան Արծրունու առաջարկության հիմնական թերությունն այն է, որ մեր լեզվի մեջ մտցվում է լատինական ներվ բառը, որը, չնայած իր հասկանալիությանը և զցած խոր արմատներին, այնուամենայնիվ մեզ համար մնում է խորթ և ոչ այնքան ցանկալի:

Նլնելով դրանից և հաշվի առնելով օտարաբանությունից խուսափելու որոշ ընկերների ցանկությունը, մենք գտնում ենք, որ ավելի նպատակահարմար կլիներ տարբերակել ջիդ և ջիլ փոփոխականների իմաստը, որոնք մինչև օրս կիրառվել են որպես հոմանիշներ, և անվանել առաջինով, այսինքն՝ ջիդով լատ. nervus անատոմիական գոյացությունը, երկրորդով, այսինքն՝ ջիլով՝ tendo-ն, իսկ նյարդով արտահայտել fibra-ն:

Դարեր շարունակ մեր բժշկական տերմինաբանության առաջ ծառացած այս կենդոտ հարցի նման լուծումը արդարացվում է նաև նրանով, որ այսօր ժողովրդական լեզվի մեջ և ոչ մասնագիտական մամուլում լայնորեն կիրառվում են ջղային, ջղայնություն, ջղայնանալ բառերը, որտեղ ջիդ արմատը գործածվում է ներվի իմաստով: